



2024 թվականի փետրվար

ՋՐԱՅԻՆ ՍԱԿԱՎՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ՆԿԱՋԵՑՈՒՄ ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈՓՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

– Կոթի, Չինարի և Սպիտակ Հայաստան

Ներածական

Սպիտակը միացել է Քաղաքապետերի դաշնագրին 2014թ.-ի մայիսին և մշակել է իր ԿԵՉԳԾ-ն 2015թ.-ի ապրիլին: Ավելի ուշ՝ 2021թ.-ի ապրիլին համայնքը միացել է «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նոր նախաձեռնությանը, հանձնառություն ստանձնելով կրճատել 29 արտանետումները 30%-ով մինչև 2030թ. և բարձրացնել համայնքի դիմակայունությունը կլիմայի փոփոխության անբարենպաստ ազդեցությունների հանդեպ:

Հարմարվողականության միջոցառումներն իրագործվել են ՄԱՉԾ-ի և ՇՁևաժամերի կանխարգելման և վերականգնման բյուրոյի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցում տեղական զարգացման բարելավված պլանավորման միջոցով» ծրագրի շրջանակներում 2014-2015թթ.

Ծրագրի հիմնական նպատակն էր բարձրացնել Հայաստանի կլիմայական դիմակայունությունն՝ ամենաբարձր ռիսկի ոլորտներում և տարածքներում, և ապահովել ազգային պատասխանատվությունը՝ ինստիտուցիոնալ գիտելիքների և պատասխանատվության բարձրացման միջոցով:

Հատուկ նպատակներն էին՝ i) մեղմացնել գյուղական համայնքներում կլիմայի փոփոխության ռիսկերը՝ կլիմայական ռիսկերի կառավարման առաջնահերթության միջոցով. ii) գյուղատնտեսական պրակտիկայում ռիսկի նվազեցման միջոցառումների կիրառում/փորձարկում. iii) բարձրացնել շահագրգիռ կողմերի իրազեկությունը գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության սպառնալիքների վերաբերյալ, և iv) խոցելի համայնքների ռիսկերի կառավարման և հարմարվողական կարողությունների ուժեղացում:

Նախապատմություն

Հայաստանը կլիմայի փոփոխության ազդեցության վտանգի տակ գտնվող երկրներից է և լրջորեն տուժում է բնական աղետներից, ինչպիսիք են երկրաշարժերը, սողանքները, սելավները, ինչպես նաև ջրհեղեղները, կարկուտը, երաշտը, հողի էրոզիան և հողերի դեգրադացումը, որոնք ուղղակիորեն ազդում են տեղական գյուղատնտեսության արտադրողականության և եկամտաբերության վրա:

Նպատակ ունենալով օգնել երկրներին զարգացնել ռիսկերը կառավարելու կարողությունները, շահագրգիռ կողմերին տրամադրել համապատասխան որոշումներ կայացնելու վերաբերյալ տեղեկատվություն և գործիքներ՝ դիմակայելու կլիմայական ռիսկերի աճով ընդգծված մարտահրավերներին, ՄԱՉԾ-ն մշակել և ընդունել է կլիմայի ռիսկերի կառավարման շրջանակը (Climate Risk Management Framework - CRM), որն ինտեգրում է աղետների ռիսկի նվազեցման ավանդական մոտեցումները, և կլիմայի փոփոխության հարմարվողականությունը:

Ցանկանալով խթանել CRM շրջանակը, ՄԱՉԾ-ն ֆինանսավորել է ծրագիրը՝ նպատակ ունենալով մեղմել գյուղական համայնքների կլիմայի փոփոխության ռիսկերը, կլիմայական ռիսկերի կառավարումը ներդնել գյուղատնտեսության ոլորտում և ուժեղացնել խոցելի համայնքների հարմարվողական կարողությունները՝ խթանելու կլիմայի դիմակայունությունը:



Գործողությունների նկարագրություն

01

ՄԱՉԾ-ի Համայնքային զարգացման ծրագրի հետ համատեղ ծրագրի թիմը կատարել է թիրախային համայնքների հարմարվողականության միջոցառումների կարիքների գնահատում: Քննարկվել են հարմարվողականության առաջարկությունները և ընտրվել է կաթիլային ոռոգման համակարգով ընտանեկան ջերմոցների տրամադրման տարբերակ՝ ջրի պակասի և մշակաբույսերի մշակման ռիսկերը մեղմելու նպատակով:

02

Կաթիլային ոռոգումը ոռոգման արդյունավետ և տնտեսական մեթոդ է: Սովորաբար օգտագործված լինելով սակավ ջրային ռեսուրսներով չոր շրջաններում, մեր օրերում կաթիլային ոռոգման օգտագործումը տարածվում է, քանի որ ոռոգման այս մեթոդը սովորաբար ավելի քան 90% արդյունավետ է թույլ տալիս բույսերին օգտագործել կիրառվող ջուրը:

03

Ծրագրի իրականացման արդյունքում Տավուշի մարզի Կոթի և Չինարի համայնքների 26 գյուղական ընտանիքների (որից 13-ը կառավարվում են կանանց կողմից) ջերմոցների համար տրամադրվել են ընդհանուր 4160 գծային մետր կաթիլային ոռոգման համակարգեր:

04


Սպիտակ համայնքում 2014թ.-ի հուլիս ամսից Սպիտակի քաղաքապետարանի և «Սեյվ դի յիլդրեն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսապայմանների բարելավում ջերմոցային մշակության մեջ գեղավածության ապահովմամբ» ծրագրի շրջանակներում կառուցված 2000 մ2 ջերմոցում տեղադրվել է կաթիլային ոռոգման համակարգ: Ջերմոցը շահագործում է 4 կին և 3 տղամարդ, որից 5 հոգի հաշմանդամություն ունեն: Տրամադրված կաթիլային ոռոգման համակարգն ապահովել է ջերմոցի ամբողջական տեխնոլոգիական ցիկլը և ներկայումս այն գտնվում է լիարժեք շահագործման մեջ:

Կիզակետում

Ծրագիրը համահունչ է Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում 2020-2030թթ. տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների ռազմավարության նպատակներին, որի հիմնարար սկզբունքներից են կլիմայի փոփոխության հարմարվողականությունը, դիմակայունությունը և շրջակա միջավայրի կայունությունը:

Այն նաև համապատասխանում է Հայաստանի Կլիմայի փոփոխությանը հարմարվողականության ազգային ծրագրի նպատակներին, որոնք ուղղված են Հայաստանում կլիմայական ռիսկերի նվազեցմանը և կառավարմանը՝ կլիմայի փոփոխության հետևանքների վերացման, ձևավորվող հնարավորություններից լիարժեք օգտվելու, սոցիալ-տնտեսական խոցելիության նվազեցման միջոցով, ինչպես նաև խուսափել կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած կորուստներից և վնասներից:

Սպիտակ



Բնակչություն:

43 460

Տարածք:

615 կմ²

Քաղաքապետերի դաշնագիրը ստորագրվել է

13.09.2014թ

CO₂ արտանետումների նվազեցման թիրախ.

30%

Թիրախային ոլորտը, կլիմայական վտանգ(ներ)ը և բնակչության խոցելի խումբը

Թիրախային ոլորտներն են՝ Գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն և ջրային ռեսուրսների կառավարում:

Կլիմայական վտանգներն են՝ Երաշտները և հողերի դեգրադացումը:

Բնակչության խոցելի խմբերն են՝ փոքր համայնքների բնակիչներ, կանայք, մշտական աշխատանք չունեցող և ցածր վարձատրվող բնակչություն, հաշմանդամություն ունեցող անձինք և այլ թիրախային խմբեր, որոնք առավել շատ են տուժում կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող բնական աղետներից և չունեն բավարար միջոցներ իրենց գույքին պատճառված վնասը վերացնելու համար:

ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԷ Է ՀԷՏԱՆՅԱԼ ՆՇԱՆԱԿԱԼ ԱՐՊՅՈՒՆՔՆԵՐԻ.

Բարելավվել է փոքր տնտեսությունների հարմարվողականությունը կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունների հանդիման:



Նվազում են սոցիալական, տնտեսական և պարենային անվտանգության սպառնալիքները, որոնք ի հայտ են գալիս կլիմայի փոփոխության հետևանքով, ջրային ռեսուրսների պակասից և հողերի դեգրադացիայից:



Բարձրացվում է գյուղատնտեսության մեջ ադապտացիոն տեխնոլոգիաների վերաբերյալ բնակչության իրազեկվածությունն ու գիտելիքների մակարդակը:



Սպիտակում լրացուցիչ աշխատատեղեր են ստեղծվել տեղի բնակչության, այդ թվում՝ հաշմանդամների համար:



Ջրի զգալի խնայողություն և բուսականության բերքատվության բարելավում համեմատած ավանդական մակերևութային ոռոգման համակարգերի, դրսևորվել է կաթիլային ոռոգման փորձնական Էժան մեթոդով, որը զուգորդվել է պարարտանյութերի պատշաճ կիրառմամբ, այդպիսով ստեղծելով կլիմայի փոփոխության բացասական ազդեցություն ունեցող գյուղական համայնքներում զարգացման մեծ ներուժ:



ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

<https://nature-ic.am/en/projects/climate-risk-management>

€

Ծրագրի ֆինանսավորում

- Ֆինանսավորման աղբյուր(ներ).**
Ծրագիրը ֆինանսավորվում է «Գյուղական համայնքների կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցում տեղական զարգացման բարելավված պլանավորման միջոցով» ՄԱԶԾ - ԿՌԿՇ / 00075559 ծրագրի կողմից և համաֆինանսավորվում է (10%) 26 շահառու տնային տնտեսությունների կողմից
- Ընդհանուր գումարը.**
7400 ԱՄՆ դոլար (Կոթի, Չինարի) և 4500 ԱՄՆ դոլար (Սպիտակ)

Հիմնական թվեր



Տավուշի մարզի 26 գյուղական ընտանիքների ջերմոցներում տեղադրված կաթիլային ոռոգման համակարգերի ընդհանուր երկարությունը՝ **4160** մետր



Սպիտակի համայնքային ջերմոցներում տեղադրված կաթիլային ոռոգման համակարգի ծածկույթը՝ **2000** մ²

ԿԱՊ

Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկությունների կարող եք ստանալ հետևյալ անձից.

Հասցե՝ Կառավարական շենք N3, գրասենյակ N533, ք.Երևան, ՀՀ
Էլ. փոստ՝ weather@nature.am
Հեռախոս՝ +374 10 583920
Կայք՝ www.nature-ic.am

Կոնտակտային անձ՝

Դիանա Հարությունյան

Կլիմայի փոփոխության ծրագրի համակարգող, ՄԱԶԾ Հայաստան